

Շահին թէ մանկանց կուլակը տէր Անդրէաս ամիլած էր ոչ թէ սեպհական կամքով, այլ «խրատելով վերակացունին իւրոյ», եւ յանուանէ կը յիշէ Մովսէս վարդապետը. «նա է օրէնուսոյց եւ դաստիարակ տէր Անդրէասին» (Առ. 361) : Ասոր վրայ հրաման կ'արձակէ Շահ Արաս՝ երթալ գտնել վարդապետը եւ «կապանօք ածել» առ ինքն : «Եւ զօրականացն զնացեալ կալան զՄովսէս վարդապետն, ընդ նմին եւ զՊօղոս վարդապետն, եւ եղին զօղամանեակ զուգեալ ի փայտից ի պարանոցս նոցա եւ երկաթ ոտնակապ յոտս նոցա, յաւուրս ցրտութեան ձմերայնոյ, եւ բերին զերկօսեան վարդապետսն ի բանակն շահին» : Շահը ի սկզբան կը խորհէր երկուքն ալ նահատակել, բայց ապա նախընտրեց տուգանքի ենթարկել զանոնք, համարելով թէ այս կերպով «լինի աւելի օգուտ մեզ եւ վնաս նոցա» : Տուգանքի քանակը նշանակած էր 500 թուման, բայց յետոյ բարեխօսութեամբ իւր նախարարներուն իջեցուց 300 թումանի : «Անկար եւ չքաւոր» վարդապետներուն տրուեցաւ իրաւունք զինուորներու հսկողութեան տակ հանգանակելու այս գումարը : Շնորհիւ բարի համբաւին զոր կը վայելէին վարդապետները ժողովրդեան քով, դժուարին չեղաւ հաւաքելու պահանջուած գումարն եւ աւելին. հարուստ եւ աղքատ, անոնց մէջ նաեւ բարեպաշտ կանայք «անխնայաբար թափէին զինչս եւ զողորմութիւնս